

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 20

13 ՄԱՅԻՍ 1900

Մասիս շաբաթաբերթի սարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի քե' Կ. Պոլսոյ եւ քե' գաւառներուն համար, կանխիկ : Արժանահման՝ 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ՝ անորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Դաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն բոլ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԻ

درعليه ده غلطه ده «ماسيس» غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Ղալաթիա, Նորաստանկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



ՅՈՅԺ ԳԵՂԵՑԻԿ և ընտիր ապրանքներ
ծախու հանուած են նոր 0 ԲԲԷՆԹԱՆ վաճառատան
մէջ, Բերա, Պոն Մարշէին գիմաց. պէտք է գիտնալ
որ այս ապրանքները անհաւատարի կերպով ածան են,
որովհետեւ վաճառատունէն ուղղակի կը հասնին և
պզտիկ շահով մը կը ծախուին: Հասարակութիւնը
խիստ շահաւոր պայմաններով և չափաւոր գիններով
պիտի կրնայ ուրիշն գնել եղանակին համար իրեն

պէտք եղածը, ինչպէս քորսածի և պլուզի համար մետաքսէ կերպաններ լաւ տեսակէ և նոր գծագրութեամբ,
մէթրոն 10, 12 և 14 զրուշի, թափթա կլաոէ՝ երաշխաւորուած իր գիմացկունութեանը համար ամէն նոր գոյնե-
րով, մէթրոն 12 և 14 զրշի, ֆանթէղի մետաքսէ կերպաններ ամաղջ քոթիւմի համար, մէթրոն 15, 18, 20 և
25 զրշի, բուրգէ և բրդախառն մետաքսէ նուվոթէ խիստ գեղեցիկ կերպաններ, մէթրոն 6 զրշէն, լաւ տրա
կառնի բէլլըրիներ 95 և 120 զրշի. թափթ պէ միւրօններ խիստ գիմացկուն, 90 և 105 զրշ. պլուզներ և քոր-
սածներ թափթա իւնի կամ ֆանթէղիով կարուած և գեղեցիկ կառնիթիւրներով 95, 105 և 120 զրուշի.
ընտիր տեսակէ թափթա էքոսէէ հովանոցներ 35 զրշի. և այլն, և այլն:

Վերեւ ծանուցուած ապրանքներէն զատ, մեր վաճառատան մէջ կը գտնուի կատարեալ մթերք մը ճոխ
ապրանքներու, ինչպէս Բարիզեան ամենէն գեղեցիկ մետաքսեղէններու և բրդեղէններու, խիստ գեղեցիկ
պրօտէ քոթիւմներ, բէլլըրիներ՝ ամենագեղեցիկ կարնիթիւրներով և վերջին նորաձեւութեան վրայ շինուած,
Այս ամէն ապրանքները նոյնպէս խիստ շահաւոր գիններով կը ծախուին:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ԲՈՒՆԵԹԱՆ»Ի



ԷՔԻԹԱՊԼ

Ամերիկեան Ապրանքագրական Ընկ.

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԷՆ ՀՁՐՐԸ

Տնօրէն Թուրքոյ ԳԱՌԷԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Կ. Պոլիս, Անանիատի խան

Ի դէպ մահու ապանովագրութիւն

Միայն 20 տարեվնարով

Մահուան պարագային տարեվնար կը դադրի
(VIE 20 PRIMES)

ՕՐԻՆԱԿ

Տարիք 35, գումար 100,000 Ֆրանք ի դէպ մահու վճարելի

Ֆրանսական ընկերութեանց թարիֆին համաձայն տարեվճարն է	Ֆր.	4140
Էթիօպիական ընկերութեան թարիֆին համաձայն տարեվճարն է	»	3408
Տարեկան տարբերութիւն ի նպաստ էքիթապլի	»	732
20 տարուան մէջ տարբերութիւն ի նպաստ էքիթապլի	»	14640
100 ին 5 էն բաղադրեալ տոկոսով	»	25414

Այսինքն աւելի քան 6 տարեվճարի խնայողութիւն մը ԻՆՊԱՍՏ ԷՔԻԹԱՊԼԻ

ՄԱՍԻՍԻ այն ընթերցողները որոնք հաւաքածոյ չեն կազմեր եւ առաջին թիւէն
տրամադրելի ունին, ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան խմբագրութեան՝ զրկելով
այդ թիւը զոր պատրաստ ենք գնելու կրկին գինով, որքան օրինակ որ բերուի:

ՄԱՍԻՆ

49Դ՝ ՏԱՐԻ

— 13 ՄԱՅԻՍ 1900 —

ԹԻԻ 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Անունին հմայքը ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. — Բանաստեղծություններ. «Աղուորի մը» ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒ-ԹԻՒՆԵԱՆ. «Դաշնակը». Մ. Ո. — Մատենախոսական. Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ. — Ընտանեկան Տոամներ (ԲՕԼ Պուրմէի նոր վեպը) քարգմ եւ ՓԻՄԷ ՕՏԵԱՆ. — Մեր շրջանաւարտ աղջիկները. ԱՐՄԻՆԷ. — Արուեստահան-դեսը (Բարիպեան նօթեր). ԱՐՈՒԵՍԱՍԷՐ. — «Մասիս»ի Յուշատետրը:

ԱՆՈՒՆԻՆ ՀՄԱՅՔԸ

—> ❧ <—

Ինչպէս շատ մը բաներու, այնպէս ալ գեղարուեստի ու գրականութեան մէջ — եւ մանաւանդ ատենց մէջ — անունին հմայքը իր գերը ունի՝ երբեմն դատողութիւնները չիութեցնելու ատարիճան: Մեծ քանդակագործի մը ձեռքէն ելած արձան մը, նոյն իսկ եթէ չէ յաջողած, սովորաբար կը հրապուրէ տեսնողները. ու փոխադաճարար, ծանօթ հեղինակի մը գրուածքը, առանց ստորագրութեան, կը պատահի որ աննշան անցնի: Արուեստասէրը ու գրասէրը որոնք ճաշակ ունին ու կը հասկնան, իրենք իրենց կարծիք մը կը կազմեն, իրաւ է թէ քիչ մը վարանելէ ետքը բայց մեծամասնութիւնը, հասարակութիւնը անունէն կը դատէ ընդհանրապէս գործը:

Պատկերահան ձիւմանեանը ճանչցած էք հարկաւ, ան որ իր նկարները կը ցուցադրէր թիւնէլին գլուխը, փողոցին մէջտեղ: Իր մասին մանրադէպ մը լսած եմ որ բաւական յատկանշանական է այս տեսակետով, թէ եւ հակառակ կողմէն: Օր մը, Անգլիացի մը կանգ կառնէ անոր մէկ դաշտանկարին առջեւ որ յուսահատ սպասումի մը մէջտեղ կը մնար մայթին վրայ. ու գինը կը հարցնէ: «Մէկ սիկի» կը պատասխանէ ձիւմանեան, սակարկելու, զեղչելու պատրաստակամ: «Հինգ

կու տամ, կ'ըսէ օտարական անցորդը, պայմանաւ որ . . . ստորագրութիւնդ աւրես»:»

Ապահովապէս, համբաւաւոր նկարիչի մը անունը չպիտի դնէր Անգլիացին այդ նկարին տակ. բայց հաւնած էր անոր, ու կը մտածէր թէ իր սալօնին, իր հաւաքածոներուն մէջ ուշագրաւ տեղ մը կրնար գրաւել անանուն: Ինչպէս երկրորդական պատկերահանի մը ստորագրութիւնը պիտի կոտրէր, անոր վարկը:

Աւելորդ է ըսել թէ համաճայնութիւնը դոյսցաւ իսկոյն:

Այս պատմութենէն չի հետեւիր անշուշտ թէ ձիւմանեանի վրձինին բոլոր արտադրութիւնները հինգական ասիկով կամ աւելի կրնային ծախուիլ: Խեղճ մարդը, իրիկունս ներք ուշ ժամանակ մանաւանդ, մէկ-երկու մէճիտի ալ համակերպած է: Իրեն համար իշխանաւթայել համարուող այդ գնումը՝ քմահաճոյքի մը հետեւանքն էր, զիպուած մը որ չերկրորդուեցաւ: Ու ինքը մնաց միշտ՝ մայթերուն վրայ ցուցադրող նկարիչը, օրուան հացի մը համար տշխատող, արագ, անուշագիր, մնալով չէր որ էր:

Նոյն բանը կը պատահի նաեւ գրականութեան համար: Աղուոր, սրամիտ էջ մը կը

կարգաւ ու կը ցաւ իս թէ ինչո՞ւ սիրած մէկ հեղինակիդ ստորագրութիւնը չի կրեր . իսկ եթէ հետաքրքիր մը հասկցող մը չես , բնա՛ւ չես կարգար՝ երբ ստորագրութիւնը անձանօթ է : Բանաստեղծութիւնը ու վիպասանութիւնը ամէնէն աւելի ենթակայ են այս սովորութեան որ նախապաշարում մը չէ սակայն : Եւ ահա ուր որ գտլ կ'ուզէի :

Պարազ տեղը , առանց արժանիքի , առանց կարողութեան չէ որ արուեստագէտը , գրագէտը համարի մը կը տիրանան : Տաղանդ մը՝ ոչ կամ կանուխ՝ կը յայտնուի . հազուադէպ է որ անտես մնայ , արհամարհուի , տխուր ճակատագրականութեամբ մը : Ամէն հաւնութեամբ հեղինակ , առգիտք , իր սկզբնաւորութեան դժուարին օրերը ունեցած է , իր զրկանքները , իր մաքառումները , իր յուսահատութիւնները : Զօլան մանաւորի մը մէջ գրած է , կարծեմ , իր առաջին վէպը . ու Այվադովսքի , ածուխի կտորուանքներով պատերուն վրայ ուրուագիծներ նկարելով ուղարկութիւն գրաւած է : Էտիառ Շահին , դեռ քանի մը տարի առաջ անձանօթ երիտասարդ մը Բարիզի մէջ , — ինչպէս պատմուեցաւ այս էջերուն մէջ իսկ — անգլիական ու ֆրանսական մամուլէն անխորի կը գովուի այսօր : Ու եթէ չի վախճայի մեր բարեկամին « համեստութիւնը վիրաւորելէ » — ինչպէս կը սէին հին ոճով — պիտի աւելցնէի թէ Զօհրայ — որ , հակառակ իր հազուադէպ երեւումներուն , առաջին կարգին վրայ կը մնայ միշտ մեր ժամանակակից գրագէտներու շարքին մէջ — դեռ հազիւ քսան տարի առաջ , երկչոտ քայլերով ու սրտի բարախումով վեր կելլէր Պոլսոյ չեմ գիտեր ո՞ր կիսափուլ խառնին սանդուխներէն , նիկողոս Թիւլպէնտճեանին ներկայացնելու համար իր անդրանիկ յօդուածին ձեռագիրը :

Ու դեռ ո՞րքան օրինակներ կարելի է շարել՝ յաջողածներու աննշան սկզբնաւորութեան , որոնց յաջողութեան գաղտնիքը սրբան բնածին կարողութեան մը՝ նոյնքան ալ աշխատելու , սորվելու , զարգանալու յարատեւ եռանդին մէջ պիտի գտնենք :

Հրապարակագրութեան , խմբագրութեան մէջ է մանաւանդ որ մարդ ամէնէն աւելի առիթ կունենայ զրազելու « անունի հմայքին » շուրջը դարձող հարցերով : Շիտկէ շիտակ պարբերութիւն մը խմբագրելու կամ չորս վանկ քով քովի բերելու անկարող պատանիներ՝ յաւիտենական գանգատը ունին իրենց

չրթունքին ծայրը , թէ « Որովհետեւ իմ անունս անձանօթ է , անոր համար կը մերժուի գրուածքս » : Զէ՛ , բարեկամներ , կը սխալիք . բուն նախապաշարումը այդ կարծիքն է : Որչափ որ հայ խմբագիրներուն ժամանակը ու ծանրաբեւ յոգնութիւնները ներեն , անոնք խնամով կը հետեւին ու պիտի հետեւին հասնող սերունդին գրասիրական հակումներուն , նորարարող տաղանդներուն , ու եղբայրակցական ձեռք պիտի կարկառեն ապագայ խօստացողներուն , — եթէ երբեք յոսի ծառայութիւն մը մատուցանել չէ , այս գրական դարուն մէջ , գրական մարգերու պատարաստութեան սատարելը : Բարեբաղդաբար , քիչ , չա՛տ քիչ բլլալ կը խօստանայ անոնց թիւը , թէեւ ցանկացողները ստուարաթիւ :

Եւ պէտք է անկեղծապէս բռնել որ , թերթերու վարիչներուն չափ , եւ անոնցմէ աւելի՝ ուսուցիչներուն կիյնայ ուղղել տղոց գրասիրական , արուեստասիրական կամ ներհակ հակումները զորս մօտէն ու առօրեայ կերպով դիտելու դիւրութիւնը ունին :

Այս կերպով , պարազ տեղը սպառնաւ մեզանիւ թուղթի ահագին խնայողութիւն մը չէ միայն որ բնեւ պիտի տան իրենց տշակերտներուն . այլ մէկ անգամէն , հիմնապէս , պիտի դադրեցնեն այն բանաստեղծական մարմաջը , գրասիրական սիրտ հաշուքը որ կարծուածէն աւելի վարակուած է մեր դպրոցներուն մէջ : Եթէ իւրաքանչիւր վարժարան իր շրջանաւարտներու դասին մէջ մէկ գրագէտ հասցընէ , բաւականէն աւելի է : Մինչդեռ , մէկ կամ երկուքը միայն դուրս կը մնան . եւ յուսախաբութիւնը շուտով կը հասնի միւսներուն :

Ու չի մոռնանք յիշեցնել՝ բանաստեղծ , գրագէտ բլլալու ձիրքերով օժտուած պատանիներուն . արհեստի ու առեւտուրի ասպարէզներուն մէջ չէ միայն որ յամառ աշխատութիւնը , անընդհատ սորվելու , կատարելագործուելու տենչը դիրք մը կը շինեն մարդու . գրականութեան մէջ , եթէ ո՛չ զիրք մը , գէթ անուն մը շինելու համար աւելի՛ անհրաժեշտ են անոնք :

Ամէն անուն որ հմայք մը ունի՝ իրական արժանիք մը ունի անպատճառ :

Ա Ղ Ո Դ Ո Տ Ի Ս Ը

Ուրկից ե գեղն, այ աղուոր,
Այդ նրադկոտ նայուածքին.
Հոն են քափեր քիւրաւոր՝
Վառ երագներն երկինքին:

Կ'ուզէի իմ տաղերով,
— Խղճմտութիւն քերթողի, —
Աշխարհի չորս ծայրն հոլով՝
Այդ հրաշքը ներքողի:

Ու փոխարեն՝ չեմ յուսար
Սիրուելու մեծ երագին.
Դուն՝ երկինքին հաւասար,
Քերթողն՝ համբաւ մ'ունի սին:

Այ՛ մետաքսե նայուածքեդ
Փայփայուածի լոկ ինձ տուր
Սին պատրանքը, յոյսը գեթ՝
Այս հիացման տրիտուր:

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

Պ Ա Յ Ն Ա Կ Ը

Սըրան մը լայն. վարագոյրներ ծանր ու փակ.
Պատերն անքիւ նըկարներով ծածկուած.
Խորն այդ սրանին դաշնակ մը սե, սեւ համակ
Եւ անոր մօտ կին մը ամբողջ առեղծուած:


Ու կը շարժին ըիւրեղ մատներն այդ կընոջ՝
Լեզուակներուն վըրայ արագ բրբռագին,
Եւ հեծկըլտուքն ուրիշ րան չէ եթէ ոջ
Սըտիս ողբերգն փոխանցուած դաշնակին:

Աչքերս անբարբ՝ երբ նրագն ե օրօրուն՝
Ու գոց, շատ գոց երբ հառայն ե ըսպառիջ,
Ես կը նայիմ մերթ կընոջ լնու աչքերուն
Ոսկեց, ափսոս, կեղծ խոստումներ կ'առնեն քոիջ:

Եւ անստոյգ տարակոյսի, վարանման
Անգուր ժամուն՝ ինձ կը բըւի քե դաշնակն
Հըլու զոհ մ'է, սիրոյ զոհ մը՝ սըրտիս նման՝
Այդ հանելուկ-կնոջ դիւթիջ ձեռքին տակ:

Մ. Ո.

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն



ՆՈՐ ԴՊՐՈՅ — Ընթերցարան Բ. Տարի. — Հեղինակ՝ Արիստակես Յ. Պոյանեան : —

Տպար. Յ. Մասքեոսեան. Կ. Պոլիս :

Ա. Տարիէն ետք՝ որ 1889ին հրատարակուած ու ամէն կողմերէ հաւնուած էր, Ա. Պոյանեան էֆ. այս օրերս հրատարակած է իր Ընթերցարանին Բ. տարին ալ, այս անգամ Նոր Դպրոց անունով: Ինչպէս այս անունը կը ցուցնէ՝ մանկավարժական բոլորովին նոր մեթոտի մը համաձայն պատրաստուած է այս դասագիրքը որ աշակերտին մէկ տարւածան մէջ սորվելիքներուն ամբողջութիւնը կը պարունակէ, ընդգրկելով ամէն դասաւանդելի առարկայ, քերականութիւն, աշխարհագրութիւն, իրագրութիւն, երկրաչափութիւն, սրբազան պատմութիւն, նոյն իսկ երաժշտութիւն ալ:

Իր այս նախնուն պարունակութեամբը չա՛տ գրաւիչ դասագիրք մըն է ստուգիւ Նոր Դպրոցը ուր ծաղկելինջի մը հաճելի իրերախառնութեամբը իրարու յաջորդող այլազան դասերու մէջտեղերը ընդհանրուած են նաեւ տեղ տեղ ուսանաւոր-ծողովրդական երգեր ու նկարագիր կազմող սիրուն նիւթեր, աւհասարակ մեր կեանքէն ու միջավայրէն աւնուած, օրոնց մէջ անակնկալ գիւտ մը ընելու հաճոյքով՝ կը հանդիպին Թրիասիցիին մէկ աղւոր կտորին ալ, յատկապէս այս Ընթերցարանին համար գրուած: Կան նաեւ գործնական վարժութիւններու համար ալ ուղղագրութեան, յիշողութեան, շարագրութեան հրահանգներ, վերջինները պատկերներով օրոնք չա՛տ աւելի հրապուրիչ ու ներշնչող հանգամանք մը պիտի ունենային ուսանողին համար՝ եթէ քիչ մը նուազ տգեղ ըլլային. օրինակի համար՝ էջ 41ի շարագրութիւնը պատրաստելու ատեն յատակագծին մէջ ծրագրուած «սիրուն աղջիկներ»ուն տեղ՝ աշակերտը պատկերին մէջ պիտի գտնէ երկու այլանդակ դէմքեր՝ հսկա յական հովանոցի մը ներքեւ... օրոնք պիտի ներշնչեն աշակերտին ճիշդ հակառակողը կա-

տարուելիք շարագրութեան ծրագրուած հանգամանքներուն:

Թէ մանկավարժական տեսակէտով ի՞նչ արժէք ունի այս դասագիրքը եւ ի՞նչ աստիճան օգտակար կրնայ ըլլալ, այդ մասին կարծիք յայտնելու համար պէտք եղած ձեռնհասութիւնը չունենալով՝ կուզեմ միայն ըսկ լեզուի տեսակէտով քանի մը դիտողութիւններ ընել:

Աւելորդ է ըսել թէ այս տեսակ դասագրքերը օրոնք տղոց ձեռքը պիտի արուին, լեզուի կողմանէ վերջին ծայր խնամեալ ու կարելի եղածին չափ անքննադատելի ըլլալու են. պիտի պահանջէի նոյն իսկ որ տիպար լեզուով գրուած ըլլան, եթէ արդի հայերէնը վերջնական ու հաստատ նկարագիր մը ստացած ըլլար եւ կարելի ըլլար անկար աշխարհարար մը ցոյց տալ: Նոր Դպրոցի լեզուն սակայն բաւական գոհացուցիչ կրնայ համարուիլ, իրեւ բանաւոր ու կոկիկ աշխարհարար մը, համեմուած գաւառական պատշաճ բաւերով եւ գերծ ամէն ծայրայեղութենէ, ուր ո՛չ գրաբարի ձեւերը կան, ո՛չ ալ հայ լեզուի օրէնքներուն դէմ մեղանշող նորագոյն ձեւեր ու ոճեր, թէպէտեւ կերեւին հոն երբեմն զիտի, օրի եւ նմանօրինակ հոլովման ձեւեր օրոնց տեղ եւ միշտ նախապատիւ պիտի համարէի գրել օրուան, գրի եւ այլն: Այս ընդհանուր գոհացուցիչ երեւութիւն հանդէպ մարդու զարմանքը կը շարժեն, եթէ անուշադրութեան արդիւնք չեն, այն կարգ մը քերականական սխալներն ու անկապ եւ սխալ բացատրութիւնները օրոնք ուշագիր ընթերցողին աչքին կը դարնեն տեղ տեղ գրքին ամբողջ ընթացքին մէջ, զոր օրինակ՝ հետեւեալները.

«Ամէն մէկ աշակերտ գտտ գտտ աշխատեցաւ եւ ոչ մէկը կրցաւ տեղէն շարժելու որ ծառը դարձնեն ու ճամբայ բանան» էջ 48:

«Հերովդէս քահանայապետներէն իմանալով որ Յիսուս Բեժձեղեհէմ մէջ պիտի ծնէր, ուստի ըսաւ անոնց» . էջ 56:

«Ասանկով վարժուծին ըրաւ դպրոց երթալու տեղ փողոցները կը ղեզերէր» . էջ 69:

«Արդ այդ մետաղ բաձը որ ենձակային վրայ բան մը կըսէ, կամ անոր յատկութիւնը կը ցուցնէ, այդ բաձը խօսքին մէջ ստորագելի կըսուի» . էջ 97:

«Մարդ մը հոն լողացած ատեն հոսանքը զինքը առած կը տանէր . . . » . էջ 117:

«Ինչու որ դուրսի պող սողը բուրդէ հագուստներուն մէջէն դժուար կամ ուշ կը մտնէ, կամ ուրիշ խօսքով սողը բրդեղէն հագուստներուն մէջէն կանցնի (°) եւ հոն մնալով մոլղ չի տար որ դուրսի պող սողը մեր մարմինէն անցնի (°) . . . » . էջ 123:

«Կարապետ իր խոստումը պահեց մինչեւ այն ատեն որ չար, անհնազանդ, ետաւէր եւ իր ձեռքէն եկածը ուրիշին չէր ընէր, այնպէս հետզհետէ բարի եւ պատուաւոր մարդ մը եղաւ» . էջ 170:

«Գիւղին աղիկները . . . կը քալեն. դէպ ի մարգահովիտները, ծաղիկները կոխելով եւ քաղելով եւ զանոնք իրարու վրայ ցանելով (°), ծիծաղելով, խայտալով . . . » . էջ 174:

«Ահա Գրիգոր ալ խարազանէն, այնչափ ոչինչ բանէ մը որ ետքէն ինքն ալ խնդաց իր վախկոտութեանը եւ թեթեւամտութեանը վրայ»:

«Հետեւաբար անկարելի կըլլայ խոգակը անմիջապէս քակելու» . էջ 197:

«Այն հոգերը՝ որ մարգագետիններու մէջ խոտ առաջ չի գար, հոն անասուններուն անունդին համար տեսակ տեսակ բոյսեր կը ցանեն» . էջ 211:

«Անկէկա (գայլը) իր անունըդ այժմէն, ոչխարներէն եւ մանաւանդ գառուկներէն կը համէ (°) . . . » . էջ 219:

«Նապատառ կը մանաւանդ ճաղարը երկրագործին դաշտերը միշտ աւերումներ կը գործեն» . էջ 220:

Շատերու մէջէն այս քանի մը օրինակը բաւական համարելով՝ զանց կընեմ յիշել այն աւելի բաղմամբ տեղերը՝ որ յոգնակի տէր բայիին եղակի բայ տրուած է, կամ հակառակը, եղակի տէր բայիին՝ յոգնակի բայ: Յօդի գործածութեան մէջ ալ զեղծումներ պատահած են: Անհրաժեշտ տեղեր կան որ զանց առնուած է եւ պէտք չեղած տեղեր ալ որ աւելորդ յօդ չոտըւած է ի միաս իմաստի պայծառութեան: Ու յարաբերականին հայցականը շատ հեղ առանց զի գործածուած է որով իմաստի շիթթութիւններ ծագած են տեղ տեղ: Գիտնալով թէ տպագրական վրիւկները բաւական մեծ դեր կունենան միշտ այս տեսակ սխալներուն մէջ, ի հարկէ տպագրական վրիւկակի պիտի վերագրենք այս

յիշուած սխալներու մէկ մասը, թէպէտեւ գրքին սկիզբը դրուած վրիպակներու ցանկին մէջ անոնք յիշուած չեն, թո՛ղ որ այս տեսակ դատագրքերու մէջ բոլորովին աններելի են տպագրական վրիպակները:

Շատ տեղերու մէջ ալ, սակայն, ուր այս տեսակ քերականական յայտնի սխալներ չկան, բացատրութիւնները քերականական վայելուչ ու պայծառ չարք եւ կապակցութիւն չունին, տեղ տեղ ալ անորոշ, շիթթ ու թերի են. մանաւանդ իրազիտական դասերու մէջ ուր այդ թերութիւնները չա՛տ աւելի աչքի կը զարնեն: Էջ 162էն 168ի եւ 195էն 196ի իրազիտական դասերը կարգացողը մեր այս ըսածին կը համընկնէ: Կէտադրութեան մասին ալ բնաւ պէտք եղած ուշադրութիւն ընծայուած չէ. առատօրէն ստորակէտ գործածուած է հոն իսկ՝ ուր միջակէտ եւ փութ պէտք էր: Անկեղծ ըլլալու համար պէտք է ըսել թէ Ա. Պոյաճեան էֆ.ի Ընթերցարանի Ա. Տարին լեզուի կողմանէ չա՛տ աւելի կատարեալ էր. հոն ծայրէ ծայր կը տիրէ կանոնաւոր ու մաքուր աշխարհաբար մը զերծ ո՛րեւէ զեղծումէ: Ուրեմն այս Բ. Տարւոյն մէջ զիտուած լեզուի քանի մը թերութիւնները ուրիշ բան չեն տպացուցաներ՝ բայց այն թէ հեղինակը փոյթ տարած չէ առաջնոյն չափ խնամք եւ ուշադրութիւն ընծայելու այս վերջնոյն ալ լեզուին կանոնաւորութեան ու պայծառութեան:

Քանի մը մասնաւոր դիտողութիւններ ալ: Քերականական դասերը առհասարակ շատ ճիշդ, գեղեցիկ ու դիւրահասկնալի են, բայց էջ 194ի ածականաց աստիճանները բացատրող դասին մէջ կարծեմ սխալ մը կայ: Մէջ բերուած օրինակներէն «մեր երկիրը ձերինէն աւելի բարեբեր է» խօսքին մէջի ածականին աստիճանը քաղղասական է, ո՛չ թէ գերադրական, եւ «անոնց երկիրը ամէնէն աւելի բարեբեր է» խօսքին մէջ ալ ածականը գերադրական կամ աւելի ճիշդը՝ հառեմնական գերադրական է, ո՛չ թէ քաղղասական (տե՛ս Գործ. Քերակ. Գրգչ. ԼԲ. դաս եւ Քնն. Քերակ. Այտրեանի, էջ 27 եւ 168):

Տեղ տեղ դրուած ուղղագրութեան կանոնները նոյնպէս շատ գեղեցիկ են. խնդ-

րական է՝ սակայն էջ 86ի այն կանոնը թէ « եթէ բառի մը սկիզբը վօ հնչուի , պէտք է գրել ո զիրով . օր. սսկի , ոչխար եւն . բա ցառութիւն է ով բառը » : Ոսկի , ոչխար եւ նմանօրինակ բառերը վօսկի , վոչխար հնչել գրական լեզուի ազդեցութեան տակ սովորութիւն եղած է . եթէ ոչ՝ գաւառաբարբառներու մէջ անոնք առանց չրթնական վ ձայնին , չա՛տ տարբեր կը հնչուին , ո՛չ սակայն օ. ի պէս , այլ անկէ զանազանող մասնաւոր հնչմամբ մը՝ որ ուին յատուկ է : Իսկ հակառակը ով բառը գաւառաբարբառներու մէջ առհասարակ չրթնական վ.ով կը հնչուի իրրեւ վօվ կամ վիվ : Կը հասկցուի ուրեմն թէ՛ այդ մէջ բերուած կանոնը ուով սխառը բառերու համար անվրէպ կանոն մը չէ :

Ժողովրդական երգերուն մէջ կտրելի էր աւելի վայելելու ու գեղեցիկ ընտրութիւն մը ընել արդէն հրատարակուածներուն մէջէն ուրոնց մէջ շատ սիրունները կան այս տեսակ Ընթերցարանի մը մէջ գետեղուելու գերազանցապէս յարմար : Այս տեսակ երգեր հաւաքողները ընդհանրապէս անփոյթ են երգին բառերուն ուղղագրութիւնը եւ քերականական ձեւերը ձշգելու . շատ հեղ ալ քմահաճ փոփոխութիւններ կրնեն՝ գրական ձեւի վերածել փորձելով Ժողովրդական բացատրութիւնները : Միեւնոյն անփութութիւնը ու քմահաճ ձեւերը կ'երեւին այս Ընթերցարանին պարունակած քանի մը երգերուն մէջ ալ :

Օրինակի համար , էջ 105ի « Կազաւին երգ » ին մէջ (պէտք էր ուղղագրել ԲՈՎ Կաֆաւ) յիշուած « զիւս կիրիշկեմ » խօսքը երբե՛ք « նա , խաճաշ ընել » ի նման բոլորովին անհաւանաւ կան եւ անխմատ նշանակութիւն մը չկրնար ունենալ , « Դիւս (= դուրս) կ'իրիշկեմ » պարզապէս կը նշանակէ « դուրս կը նայիմ » : Իրիշկեղ բառին համար տե՛ս Բիւրակն ժէ. տարի թիւ 1-2. էջ 15 եւ 22 ուրիշ կը հասկցուի թէ այս բառը թէ՛ Վանայ եւ թէ՛ Խիանի բարբառներուն մէջ « նայիլ , աչել » կը նշանակէ եւ արդէն այս երգն ալ Վանայ գաւառաբարբառէն քաղուած է՝ , թէ եւ շատ մը տեղերը գրաւոր ձեւերու վերածուած են : Բուն

գաւառական ձեւովը հրատարակուած է Բագմաշիպի մէջ ուրիշ տունելով արտասուած էր նաեւ Բիւզանդիոն 1897 տարւոյ թիւ 222ին մէջ : Հոն ալ « կ'իրիշկեմ » ին նայիլ նշանակութիւնը արուած է : Դարձեալ նոյն երգին մէջի « հինաճ » բառը « զարդարուած » չի նշանակեր , այլ « հինուած = հիսուած » . արդէն « հինել » բառը գաւառացի տղաք շատ լաւ կը հասկընան : « Զեղունիկ » (= զաղաւնի) բառին ալ թերեւս տղագրական սխալով « զեղունիկ » ի դառնալէն վերջը նշանակութիւնը անպատճառ գինել պէտք էր որպէս զի հասկնալի ըլլար :

Աւարտելով դիտողութիւններուս շարքը՝ անգամ մըն ալ կը կրկնեմ թէ Ա. Պոյաճեան էֆ. ի այս Բ. Ընթերցարանը , հակառակ իր քանի մը պզտիկ թերութիւններուն — զորս կը վախճամ իսկ թէ քիչ մը խտրել քննադատեցի — իր պարունակած օգտակար նորութիւններովը եւ դասաւանդութեան զուարճացուցիչ հանգամանքովը չի դադրիր ըլլալէ դասագիրքերու ամէնէն սիրուններէն ու հրապուրիչներէն մէկը ու ամէնէն ալ յանձնարարելին . վհուկի տոպրակի մը՝ աս ալ , սխալ ըսէի , Ա. Ընթերցարանին համակրելի քննադատին բացատրութեամբը : Կը սիրենք փոտահարար յուսալ թէ Գ. Տարին որ արդէն իսկ պատրաստուելու վրայ է , ինչպէս յառաջաւանէն կ'սմանանք , բոլորովին զերծ սխալներէն այն քանի մը լեզուական եւ այլ թերութիւններէն ալ ու մանաւանդ՝ ինչ որ իմ փափաքս էր , իրադատական դասերուն մէջ աւելի տեղ պիտի տայ վաճառականական , առեւտրական ու ճարտարարուեստական ծանօթութեանց որոնց ա՛յնքան պէտք ունինք՝ պզտիկուց տղոց մէջ արթնցնելու համար այդ ճիւղերու մասին նախասիրութիւն մը՝ փոխանակ հովուերգական ու բանաստեղծական հովումներու , դործնական կեանքի համար շատ հեղա՛յնքան անպէտ եւ աննպատակ , զորս կը ներշնչեն տղոց երկրագործական եւ հովուական կեանքի այն ընդհանրապէս բանաստեղծական նկարագրութիւնները՝ որոնցմով չափէն աւելի լեցուն են մեր այս տեսակ դասագրքերը :

ՅՈՒՂՀ. ԳՍ.ԶՍՆՃԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսական գրականութեան համար օրուան նորութիւնն է Բօլ Պուրժէի վերջին գործը, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ, որուն մէջ հեղինակը ամփոփած է քանի մը վեպեր ու վիպակներ, համակ հոգեբանութիւն ու կնոջական սրտի ուսումնասիրութիւն։ Այդ գեղեցիկ հատորէն ճաշակ մը տալու համար ՄԱՍՍԻ ի ընթերցողներուն, մեր յարգելի աշխատակցութիւն Օր. Եւփին Օսեան, Խմբագրութեանս խնդրանք, բարգմանած է անոր լաւագոյն վիպակներէն մէկը, ՅԱՐՈՒԹԻՒՆ. գողտրիկ ու զգայուն գրուածք մը որ աւելի սրտին քան մտքին կը խօսի, առանց՝ ասոր համար՝ հետաքրքրական բլլայէ դադրելու։

Յամբարար, տրամբրէն, էրիզապէթ տը Ծրէն դարն ի վեր ելեր էր բլուրին, որ փակուած էր սրմով մը, եւ որ իր ամարանոցին իրրեւ դարաստան կը ծառայէր։ Անիկա նըստած էր, դարտափին ապառաժին իսկ վրայ, որ յարգարուած էր հոն, աւելի բարեբաւ տիկ օրերու մէջ, եւ ուրիշ իր աչքերը կըրնային տեսնել ծովի եւ լեռան ամէնէն ընդարձակ տեսարաններէն մէկը որ կրնայ ըլլալ Բոօվանտի մէջ, այնքան գեղատեսիլ՝ որ Իէսի չըջականերուն այդ մասը Գօթպէլ(*) մականունին արժանացած էր։ Իր ստորեւը, չոճիններուն անհաւատար գագաթները կը կանանչային, կը սարսուռային ծովածոցէն եկած բարակ քամիին տակ, ու ծովափորը ինքն իսկ կը կապուտնար աւելի հեռուն, գոցուած, մէկ կողմէն, Ժիէնի թերակղզիին երկու երկար, բարակ ուղիներէն, ու միւս կողմէն, Պրէկանտօնի ամրացած գագաթէն։ Բօրբօրօյի կղզին ու իր ատամնաձեւ ժայռերը, Բոօ-Գոսյի կղզին եւ իր Վիմին, Լըվանթինը եւ իր մերկ տափաստանները հորիզոնը կը կտրէին։ Դեռատի կնոջ աջ կողմը կը տարածուէր Մօռի լեռներուն թխպայտ չղթան, որուն ստորտը Իէսն իսկ իր ճերմակ տունները կ'առաքէր։ Ու չոզողուն արեւը փառահեղ կերպով կը ծածկէր այս անտառը, այս ալիքները, այս կղզիները, այս բլուրները, այս տուններու հեռաւոր ճակատները, — մարտավերջի երկինային արեւ մը, որ, աւելի մօտ,

վարդագոյն ներկուած ամարանոցը եւ դարաստանին կից պարտէզին ծառուղիները կը փայտայէր, իրենց ծաղկած պատկառուկներով, մանիշակագոյն հիւրիկներու եղբրուած քով, ճերմակ ու կարմիր մեխակներով, իրենց տմոյն վարդերու եւ լայն պտիկներու թաւուտքներով։

Շոճիններու փոքրիկ անտառին մէջ՝ ծառի չափ բարձր ձախեր՝ կը շարժէին ծովային հովին մէջ իրենց փափուկ-սպիտակ ողկոյնները, ու գափնիներն ալ իրենց փունջերը։ Այդ թեթեւ քամին կը սահէր, այս ծովային բոյրին հետ, բոյրը խառնուած այս ուշտիններուն եւ այս սպակներուն, բոյրը նաեւ վայրի տունկերու եւ խնկունիներու։ Հօս հոն, կը նըշմարուէին, շիտթ կերպով, օտար բոյսերու ձեւերը, արմաւենիներու լայն ոտերը, եռփայլներու սուր ծայրերը, եւ այս գրեթէ արեւելեան գարունի մը հիանալի տեսարանը կը վերջանար, կը դիւթուէր, կ'ազնուանար ա'լ աւելի անարատ հրապոյրով մը՝ մատրան զանգալի մը բարեպաշտ զօղանջիւնովը։ Այդ ձայնը փոքրիկ եկեղեցիին որ կը տիրապետէ ամբողջ այդ երկրին ու կը յորջորջուի Մայր-Աստուածածին Ախիքարութեան գեղեցիկ անունով, կը տարածուէր այդ լուսաւոր, անուշաբոյր եւ գաղջ օդին մէջ, արծաթափր թեթեւ թրթռումներով։ Այդ ձայնը կը ծանուցանէր թէ գարնան այս փառաւոր առաւօտը՝ առաւօտն էր նաեւ Զատիկին, եւ այս Յարութեան տօնը այնքան ներդաշնակութիւն ունէր, ամէն կողմ տարածուած, ընդհանուր

(*) Գեղեցիկ-Բլուր։

ուրախութեան հետ , որ այս հրաշալի բնութիւնը կը թուէր , ինքն ալ , այդ արեւուն հետ , այդ ծովուն հետ , այդ ծաղիկներուն հետ յայտարարել Սիրոյ յաղթանակը որ յաղթեց Մահուան . . . :

* * *

Ափսո՛ս , ճիշդ այդ կեանքի տօնն էր , բնութեան ու եկեղեցւոյն մէջ , տեսանելի երկընքին ու անտեսանելիին մէջ , որ կը ճնշէր նորատի կինը սուսեւել դժնդակ մեղամարտութեամբ մը , այս հրաշալի Զատիկի առաւօտով : Սեւ զգեստը զոր հագած էր , եւ որ կը դարձարէր , գգուանոյ շնորհով մը , իր խորտեալ քնքու զեղեցիկութիւնը , կը ցուցնէր սուգ մը , զոր աւելի սրտին մէջ կը կրէր անհնարին կերպով : Իր անուշիկ կապոյտ աչքերը , գրեթէ աղօտացած չափազանց արտասուելէն , խոցուած կը թուէին չքեղ օրուան շողողուն փայլէն : Զանգակին իւրաքանչիւր հնչիւնին իր դալկահար ճակատը կը քօղարկուէր աւելի դառն մտածութեամբ մը :

Զաւակ մը կորսնցուցեր էր ան — իր մէկ հատիկ զաւակը — չորս ամիս առաջ , եւ , այդ մայրական սրտին մէջ , բացուած վէրքը ա՛լ աւելի կ'արիւնէր , տեսնելով գարնան այդ դիւթանքը զոր իր սիրելի Անտրէն չափափառ տեսնէր , մտիկ ընելով այս կոչումին դէպի Ատոտեած , որուն այլ եւս չէր աղօթեր , չէր կրնար այլ եւս աղօթել՝ իր զաւակը ձեռքէն առնելէն ի վեր : Տաքուկ դարտափին վրայ նստած՝ կը նայէր յուսահատութեան մեքենական եւ անտարբեր նայուածքով : Զմայլելի հորիզոնին ամէն կողմէն դէմքեր կը ցըցուէին կարծես , ու գաղափարներու խումբեր կը հետեւէին այն դէմքերուն , որ իրեն աւելի որոշ , աւելի անհանդուրժելի կ'ընծայէին իր դժբախտութեան ամէնէն չնչին մանրամասնութիւնները : Վեց տարեկան մանչուկի մը այս գրեթէ յոնկարծական մահը , ըղբաւտապէ մը տարուած մէկ քանի օրուան մէջ , բաւական տաժանելի աղէտք մըն էր արդէն : Անձնական պարագաներ անոր ծանրութիւնը աւելցուցեր էին տակաւին , ու դեռատի կինը աչքին առջեւ կը բերէր զանոնք վերստին , մէկիկ մէկիկ , այս տեսարանին հանգէպ , որ

իրեն համար այնքան լեցուն էր անցեալով : Հանդարտիկ ծոցին այս հայելանման ջուրը ծովն էր , անանցանելի ծովը , որուն վրայ իր ամուսինը , Լիւսովիգ տը Ֆուէն , պարտաւորուէր էր երթալ Ծայրագոյն—Արեւելք , տասը ամիս առաջ : Ինք ընկերացեր էր նաւային տեղակալին մինչեւ Թուոն , ինք , այնքան խռոված կ'իյնէր այլ այնքան երջանիկ մայր : Ու հիմայ որ այնքան պէտք պիտի ունենար անոր , հանդուրժելու համար սոսկալի բանին , հազար հազարներով մըլոններ կը բաժնէին զիրենք իրարմէ : Ե՞րբ պիտի գար ան ըսելու իրեն այն բառերը որ արիւթիւն պիտի տա . . . իր իրեն ապրելու , իր պարտականութիւնը կատարելու համար . . . :

Ինչ պարտականութիւն : Զանգակին հընչիւնը որ կ'աւետէր պատարագը , որուն ներկայ գտնուիլը կ'արգիլէր իրեն իր ներքին ընդվզումը , շատ յոտակ կերպով կը յիշեցնէր զայն իրեն : Եթէ տիկին տը Ֆուէն սուրբ վրայ ըլլար , պիտի կրնար , նեղ ճամբուն վրայ , որ , ամբարանցին գունդէն , կը սողոսկի անտառին միջեւէն մինչեւ մատուռը , նշմարել կառք մը , որուն լծուած էր պէշասպիկ մը , եւ , այդ կառքին մէջ , իրեն պէս սգաւոր երկու տղայ : Իմանք մը՝ ինք տարեկան , աղջիկ մը՝ ութը տարեկան : Այս երկու տղաքը , կ'իյնէր Ալիս . իր էրկանը զաւակներն էին , զորոնք ունեցած էր առաջին ամուսնութենէ մը : Ինք կը յիշէր : Ինք երբ ամուսնացեր էր ծովային սպային հետ , որ միեւնոյն ժամանակ իր մօրեղբորորդին էր , ինչպէս անկեղծ կարեկցութիւն մը ունեցեր էր այդ երկու որբերուն համար : Ինչպէ՛ս իր բոլոր խղճմտանքը ոտք ելեր էր անոնց մեռած մօրը տեղը բռնելու համար , այն աստիճան որ անոնք իրենց ինք եւ ութը տարեկան հասակնուն մէջ կ'անգիտանային թէ իրենց մայրը չըլլայ : Երբ ինք ալ մանչ զաւակ մը ունեցեր էր , ինչ խղճահարութեամբ Զանգակին էր բնաւ նախապատուութիւն մը ցոյց չտալ իր զաւակին : Ծիգ մը բնելու անգամ պէտք չէր ունեցած : Քանի որ երեք խորատեալ զլուխներ վագեր , խաղացեր , խնդացեր էին իր շուրջը , իր սիրտն ալ բնականաբար այդ երեքին մէջտեղը բաժնուէր էր . . . : Ինչո՞ւ հիմայ այսպէս չէր ըլլար :

Ինչո՞ւ . . . : Միայն ձախին դառնալը
կը բաւէր , դէպի այն կողմը զոր դեռատի
կինը խիստ լաւ կը ծանչնար , այս հարցումին
պատասխանը առնելու համար : Հունա՛ ,
քաղքին վերջին տուններէն անդին , հովիտի
մը խոռոչը . տափարակութիւն մը կը նշանա-
կէր , գերեզմաննոցի մը տափարակութիւնը :
Այն օրէն ի վեր ուր տեսեր էր աչքովը — իր
արիւթիւնը մինչեւ հոն գացեր էր — իր հէգ
Անտրէին պզտիկ դագաղին սահիլը չուաննե-
րէն վար դեռափար փոսին մէջ , անհնարին
տպաւորութիւն մը կրեր էր , որուն հանդէպ
ի զուր մարտնչեր էր , ու կը մարտնչէր հա-
նապազ , եւ միշտ ի զուր . եւ , այս հանգի-
սաւոր առաւօտեան հանդէպ , աւելի ուժգին
զգացեր էր զայն իր սրտին մէջ : Չէր կրնար
ներել իր ամուսնոյն երկու պզտիկներուն որ
ուրախ ըլլան , որ մատաղատի ըլլան , որ
քալեն , որ ջնչեն , որ գոյութիւն ունենան
վերջապէս , մինչդեռ միւսը , պզտիկը , իր
պզտիկը անշարժ կը պռուկէր գերեզմանին
մէջ : Միայն սիրելէ չէր դադրած գանձը :
Ատեն տան , իրեն կը թուէր , ու իր ամ
բողջ էութիւնը կը սարսուար խղճահարու-
թեամբ , թէ կ'ատէր գանձը , իրեւ թէ ա-
նոնք գացողին ուրախութեան , կենդանու-
թեան , լոյսի բաժինը գողցած ըլլային : Ա-
նոնց « Մայրիկ » կանչելը լսելը իրեն տենե-
ղոտ ու անգութ տենչ մը կու տար անոնց ե-
րեսն ի վեր պտուալու . « Լուեցէ՛ք , ես ձեր
մայրը չե՛մ . . . » որպէս զի այս բառը ոչ ոքի
կողմէ չուզուի իրեն , քանի որ այն սիրուն
ու քնքուշ բերանը , որ միայն իրաւունք ու-
նէր արտասանելու արդարեւ , չպիտի կրնար
իրեն ըսել վերստին :

Այդ առաւօտը , այդ կըքոտ քէնը իր

խորթ զաւակներուն գէմ՝ աւելի խորացէս
յուզեր էր գինքը : Ինք ուզեր էր , ուրիշ
տարիներու պէս , իր ձեռքովը տալ անոնց
Զատիկի հաւկիթները : Այս արդարացումը
կրնար ունենալ , արդարեւ . որքան այս ա-
նիրաւ ատելութիւնը կ'աճէր իր սրտին մէջ ,
այնքան աւելի կը գործածէր իր կորովը , իր
ատելութիւնը չյայտնելու համար իր արարք-
ներուն մէջ : Ուստի տղաքը իր սենեակը ե-
կեր էին : Ինք տեսեր էր որ անոնց աչքերը
չուցեր էին տենդոտ անհամբերութեամբ մը ,
անոնց ձեռքերը դողդաղով բացեր էին ներ-
կուած փայտէ խոշոր հաւկիթները , անոնց
գէմքերը հիացած էին իրենց համար ընտրած
առարկաներուն հանդէպ : գեղեցիկ գնդաւեղ
մը մանչուն համար , խաչով շղթայ մը աղջի-
կանը համար . . . : Աստուած իմ , Անմեղ-
ները բայց դաժանները , որոնք իր սիրտը
կ'արիւնէին իրենց միամիտ ուրախութիւնը
ցոյց տալով , այն տպրելու եւ աշխարհ-
քին մէջ ըլլալու հաճոյքը , որ իրենց
սեւ հագո՛ւստն իսկ կը զուարթացնէր : Միւսը
իրեն երեւցեր էր մտածութեանը մէջ , մոռ-
ցուած ըլլալու յանդիմանութեամբ մը իր նը-
ւաղկատ աչքերուն մէջ , Հեկեկանք մը եւեր
էր հէգ կնոջ կոկորդն ի վեր , զոր խեղդելու
քաջութիւնը ունեցեր էր սակայն , եւ իր
վատին այս կծու պատրանքը քիչ մը սխալե-
լու համար է որ առանձին եկեր նստեր էր
այդ ամայի դարձափին վրայ , մինչդեռ կին
եւ Ակիսը պատարագի կ'երթային : Պէտք չէ՞ր
ստիպել գիտնար թէ իր սրտին վէրքը պիտի
արժարժէր համայն բնութեան այս երանու-
թեան մէջ , փոխանակ մեղ Լանալու :

ԲՕԼ ՊՈՒՐԺԷ

(Մնացածը յաջորդով)

ՅԱԽԱԿՅՈՒԹԻՒՆ . — Մասիսի խմբագրու-
թիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ Վսեմ .
Պառնաս Պօղոս էֆէնտիի որ իր մայրը կոր-
սրնցնելու գժարադրութիւնը ունեցաւ նախորդ
շաբթուն : Պառնաս էֆ . թէ՛ Տպագրական
Վերատեսչութեան մէջ իր վարած կարեւոր
պաշտօնովը եւ թէ՛ իր անձնական արժանի-
քովը ընդհանուր յարգանք կը վայելէ , եւ իր
կրած այս դառն սուգը վշտի անկեղծ ար-

տայայտութիւն մը առաջ բերաւ խոր գինքը
ճանչցողներուն սրտին մէջ , իր ծերունա-
գարդ մոր՝ հանգուցեալ Տիկին Հովիտիմէ Ս .
Պառնասեանի յուզարկաւորութեան տխուր
հանգէսը կատարուեցաւ Սկիւտարի Ս . Խաչ
եկեղեցին , յուզարկաւոր բարեկամներու ըստ-
ուար ու համակիր բաղմունքեան մը ներկա-
յութեամբ :

1900 Ի ԱՐՈՒԵՍՏԱՆԱՆԴԵՍԸ

ԲԱՐԻԶԵԱՆ ՆՕԹԵՐ

Արուեստահանդէսի օտմ բաժինին ըստ
ցումը կատարուեցաւ մայիս 15ին (Ն. Տ.) հան-
դիսաւորապէս : Դեռագան Վսեմ. Միւնիւր պէյ
որ միանգամայն օտմ պատուիրակին է Արուես-
տահանդէսին , չքեզ կազմակերպութիւն մը
տուած էր այս հանդէսին եւ իր շուրջն ունե-
նալով դեսպանատան ու հիւպատոսարանի
պաշտօնէութիւնը , արժանաւորապէս ընդու-
նեց ու պատուասիրեց հրաւիրեալները : Ներ-
կաներուն մէջ կը նշմարուէին Արուեստահան-
դէսին կազմակերպիչ ու ընդհ. գովախնդ. Պ.
Բիքաւ , օտար տէրութեանց պատուիրակնե-
րուն մեծագոյն մասը , օտմ. հպատակները ,
եւ Ֆրանսայի ակադեմիոյ անձնաւորութիւն-
ներէն շատեր՝ պաշտօնական անձինք , ար-
ուեստագէտներ , օրագրողներ ու տիկիներ ,
Ներկաները , Միւնիւր պէյի առաջնորդութեամբ ,
այցեւելցին օտմ. ճիւղին գաղանան մասերը եւ
խնդակցութիւն յայտնեցին տիրող կանոնաւո-
րութեան ու տարուած խնամքին համար :
Բացման արարողութենէն ետքը , որու մի-
ջոյնն բանախօսութիւններ արտասանուեցան ,
հրաւիրեալներու երկուսն բաղմութիւնը համա-
խմրուեցաւ շքանշանի մը շուրջը , ուր բա-
ժակներ պարգուեցան Վեհ. Սուլթանին տ-
րեւատութեանը համար : Նուագածուներու
խումբ մը կայս . Համախօսէ քայլերգը նուա-
գեց . նայնպէս երաժշտական ուրիշ ընտիր
հատուածներ :

Սքանչացումը միահամուռ էր Արուեստա-
հանդէսի օտմ. բաժինին չքեզութեանը եւ
ճօխ-ու ճաշակաւոր յարգարմանը համար :

Օտմ. տաղաւարը , իտալական ու ամերիկ-
եան տաղաւարներուն մէջտեղ կառուցուած ,
Քէ տ'Օրտիէ 3 մետրին կողմը , ամէն կերպով
նպաստաւոր դիրք մը ունի ու չքեզ երեւոյթ
մը կը նմայէ , Սէնի վրայ նայող լայն պատըշ-
գամով մը եզերուած՝ ուսկից հիանալի բանօ.

բամա մը կը պարզուի : Ընդարձակ ու հոյա-
կապ շէնք մին է այդ տաղաւարը , զոր կա-
ռուցած է Գրանտայի ճարտարապետ Պ. Ռընէ
Տրպիւսօն , Կ Պալադ նշանաւոր շէնքերուն
ճարտարապետական ճաշակին հետեւողու-
թեամբ : Երեք մասի բաժնուած է որոնք կը
պարունակեն՝ արեւելեան շուկայ մը , ճար-
տարարուեստներու յատուկ ցուցադրութիւն
մը եւ թանգարան մը : Շուկան հաստատուած
է գեանայարիւր . ճարտարարուեստական բա-
ժինը՝ առաջին յարկը՝ ուր կը գտնուին , ի մէջ
այլոց , Հէրէքէի կայս. գործարանին արտադ-
րութիւնը եզրղ սքանչելի կապերուներու նմոյշ-
ներ . իսկ թանգարանը՝ երկրորդ յարկը : Այս
բաժանումին մէջ մասնաւորապէս ուշագրաւ
է Երուսաղէմի մանրանկար ձեւացում մը ,
դաշտանկարներով ու խանութներով :

Թուրքիա ալ , ուրիշ տէրութեանց նման ,
իր տաղաւարին մէջ միայն սահմանափակած
չէ իր ցուցադրութեանց ամբողջութիւնը ու
որոնք Արուեստահանդէսին զանազան բաժին-
ներուն մէջ տեղաւորուած ու դասաւորուած
են . բայց օտմ. տաղաւարը , ինքնին , Ար-
ուեստահանդէսին է՛ն գեղեցիկ ու ինքնա-
տիպ մասերէն մէկը կը կազմէ , արեւելեան
ու եւրոպական ճոխութեան ու ճաշակներու
ներդաշնակ պէսպիսութեամբ մը որ զբաւիչ
տպաւորութիւն մը կը թողու բոլոր այցեւո-
ներուն վրայ եւ բուն հետաքրքրութիւն կը
չարժէ :

Գերմանական տաղաւարին բացումը կա-
տարուեցաւ միեւնոյն օրը , 15 մայիս (Ն. Տ.) :
Օրաթերթերը օրը օրին նկարագրած ըլլալով
այս բացման հանդէսները , Մաւիսի մէջ պի-
տի արձանագրենք միայն ընդհանուր գիծերը
այս կամ այն ցուցադրութեան , պտոյտներու
տպաւորութիւններ ու յատկանշանական ման-
րամանութիւններ : Գերմանական տաղաւա-

րին ամէնէն ուշագրաւ մասն է «Մեծն Ֆրէ-տէրիքի հաւաքածոյ» կոչուածը, առաջին յարկի չորս սրահներուն մէջ հաստատուած, ուր կը տեսնուին ֆրանսական նկարչութեան ու քանդակագործութեան այն նրբարուեստ ու հազուագիւտ արտադրութիւնները որոնք Պէրլինի, Շարլօթէնպօրկի ու Բօժամար պալատներուն մէջ կը գտնուին եւ Բարիզի Արուեստահանդէսը զրկուած ու գերմանական բաժինին մէջ ամբողջութեամբ են՝ կայսեր հրամանով: Այդ չորս սրահները, որոնց ներքին ձեւն ու զարդարանքը ընդօրինակուած են Գերմանիոյ արքունական զգեստներէն, պատմական կարասիներով կահուորուած են եւ կը պարունակեն Մեծն Ֆրէտէրիքի անձնական գոյքերէն թանկագին առարկաներ, Գերմանական տաղաւարին այս պատմական բաժինը բաց չէ հասարակութեան, եւ գերմանական պատուիրակ Տօքթ. Ռիխթէրի կողմէ տրուելիք մուտքի տոմսերով միայն կարելի է այցելել զայն, աստուները, քանի մը ժամ:

Նորվեկիոյ տաղաւարը, — որուն բացումը կատարուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց ու Մոնաքոյի իշխանապետութեան տաղաւարներուն հետ, միեւնոյն օրը, Մայիս 12ին (Ն. Տ) — գիւղական պարզուկ տուն մըն է, կարմիր ու կանաչ ներկուած, ճիշդ նմանը անոնց որոնց մէջ կը բնակին Նորվեկիոյ ձրկնորաները: Ներսը, ամբողջ միակ halle է մը կը բաղկանայ, որուն ճակատը կը նշմարուի խոշոր գիւղական մը եւ շուրջը կը պարզուին կարգաւ՝ ձկնորսութեան յատուկ գործիներ, ուղիւններ, նաւակներ, յետոյ, բնական պատմութեան վերաբերող հաւաքածոներ Պէրլինի թանգարանէն բերուած: Նանզէն, համբաւաւոր երկրախոյզը, ինքն ալ իր ցուցադրութեան բաժինը ունի այս տաղաւարին մէջ սպակեղարանին մէջ ուր կը տեսնուին իր ուղեւորական կազմածները, կաշիէ տոպրակը որ՝ սառուցապատ դաշտերուն վրայ՝ իր անկողինը ելաւ, իր վրանը, փսիկ մորթէ շինուած իր նեղ-երկար նաւակը, իր բալխիքը, իր շուները, իր խոհանոցի սպասները որոնք օրին մէկը թանգարաններու մէջ պիտի պահուին: Նորվեկեան այս ցուցադրութիւնները ճարտարարուեստի յատուկ առարկաներու առ-

թած հետաքրքրութենէն աւելին կ'ազդեն, եւ հրահանգիչ ու ներշնչող բան մը ունին իրենց մէջ. նիւթին ետին՝ մարդը սիրցնել կուտան, — կեանքերնին գիտութեան ու երկրախուզութեան նուիրած մարդերը:

Արդուզարդն ալ, ինչպէս զիւրին էր ենթադրել, իր յատուկ բաժինը ունի Արուեստահանդէսին մէջ, գիտական, պատմական առարկաներէն հետո, բայց այցելուհիներուն համար մանաւանդ հրապուրիչ ու հետաքրքրական: Արդուզարդի ցուցադրութիւններու յատուկ ազակեղարանները, հանդերձէյնի բաժինին մէջ, լեցուն են այն սովորութեամբ ու սիրուն բաներով որոնք կնոջ մը հիացումը կը գրաւեն ու ըզձանքը կը գրգռեն. հոգմահարներ, քօրսաժներ, տանդէլներ, հովանոցներ, գլխարկներ, արհեստական ծաղիկներ, կնոջական մուշտակներ, կրկնոցներ, եւայլն, հին ու նոր ճաշակներու խառնուրդ մը: Արահեստական ծաղիկները՝ բնականին պատրանքը տալու աստիճան նրբարուեստ են, ու տանդէլներու պէսպիսութիւնն ու նրբութիւնը զմայլելի: Այս ցուցադրութեանց մօտ, Բարիզի առաջնակարգ դերձակահիւները իրենց պատրաստութեանց յատուկ սրահ մը գրաւած են որ ցօրեկ ատեն ելեկտրական լուսով կը լուսաւորուի, եւ ուր՝ մամէ մարգնապատկերներու (mannequin) կամ... կնապատկերներու վրայ, բնական մեծութեամբ, աշխարհի գեղեցկագոյն արդուզարդերը եւ շրջազգեստներու բոլոր փոփոխութիւնները կը տեսնուին:

Հալիպրոնի մը պիտի ըլլայ անշուշտ, արդուզարդէն անմիջապէս ետքը խօսիլ... Բարեկարգ ական ցուցադրութեանց վրայ: Բայց չէ՞ մի սր, այն տիեզերական փեթակին մէջ որ «Էքզորիսիօն» կը կոչուի, ինչպէս գիտութեան ու արուեստի կատարելագործութիւնները նախապատմական առարկաներու եւ գործիքներու քով կը գտնուին, այնպէս ալ պերճութեան ու հարստութեան հանդէսը կը ցուցադրուին կեանքի տխուր կողմերը պատկերացնող առարկաներ: Մեքենաներու կաշիքնին առաջին յարկը կազմակերպուած է «Մայրախնամ» ընկերութեան — եթէ կարելի է այսպէս կոչել Բարիզուհիներու Société Maternelle — ցուցադրութիւնը, այդ սրահ-

հին պատերը ծածկուած են լուսանկարներով որոնք կը ներկայացնեն որբերու եւ բնկեցիկ մանուկներու ազատաճանարաններուն առօրեայ կեանքի տեսարանները . կաթնատու թիւնը , բժշկին ղնութիւնը , ճերմակեղէններու լուացումը , տղուն հանգիստը , պրատոյտը , Յետոյ , երկար սեղաններու վրայ , մանրանկար շինուածքները անոնց յատուկ բնակարաններուն ու ներքին բաժանումներուն . վարչական գրասենեակ , հիւանդարան , տարափոխիկ հիւանդութիւններէ բռնուած տղոց յատուկ « մաքրանոցներ » , անկողիններ , ամբուսակներ , լավապոններ , ամէնքն ալ պզտիկներուն համար , Բացատրական տեղէ .

կազմիրներ ու վիճակագրութիւններ ալ պիտի գտնէ այցելուն այս ցուցադրութեանց քով . եթէ կը հետաքրքրուի . եւ պիտի տեղեկանայ անոնցմէ թէ այդ բարեգործական մարմինը 130 օրօրոց ունի (որոնք բնաւ պարապ չեն մնար) իր հաստատութեան մէջ , որուն կազմակերպութեանը համար ծախսած է 438,000 Ֆր : Իր նպատակն է խնամել ու դիւրեցնել այն պզտիկները որոնց մայրերը աշխատելու կերթան , եւ չի կրնալով պահել ու սնուցանել իրենց զաւակը՝ պէտք ունին խնամուտ ու վստահելի ձեռքերու որոնց կարենան յանձնել զանոնք :

ԱՐՈՒԵՍՏԱՆԷՐ

ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

ՇՐՋԱՆԱԻԱՐՏ ԱՂՋԻԿՆԵՐԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ)

« Իբր ի՞նչ պէտք է մեծցնել մեր աղջիկները : Իբր լեզուագէ՞տ , իբր քիմիագէ՞տ , կամ իբր փաստաբա՞ն , իբր բժիշկ :

Ընտանիքի մայրերուն արդի մտահոգութիւնը ասիկա է :

Խնդիրը , իր այս ձեւին մէջ ներկայացուած , ուղիղ չ'երեւար : Նախ , որովհետեւ կնոջ գլխաւոր կոչումը արուեստ եւ մասնագիտութենէ տարրեր բան է . Որքան շատնան գիտուն կիներ , այնքան անհամեմատ մեծա. մասնութիւն մը պէտք է որ պարապի տնական կեանքի գործերով որոնք են , Գերմանացիներու ըմբռնումին համեմատ , խոհանոց , կարը , տղաքը , եկեղեցին : Երկրորդ , որովհետեւ հայ աղջիկները պատասխանատուութիւն ստանձնելու վարժութիւնը , ճաշակը եւ գաղափարն իսկ չունին , մեծ մասամբ : Հետեւաբար խորհիլ թէ մեր աղջիկներէն շատերը կրնան մասնագէտներ ըլլալ , մէկ օրէն միւսը , մագուան փոխակերպութեամբ , առանց նպատաւոր բնաւորութեան եւ դատարարակութեան , քիչ մը դժուար կ'երեւայ :

Դիւրութեամբ իրականայի չէ՝ քանի որ մասնագիտական արուեստները մէկ քանի տարիներու մէջ եւ ծախքով կը սորվուին եւ , հետեւաբար , ամէն գրգռներու հաւտաբաղէս դիւրամատչելի չեն : Ըսել չէ թէ մասնագէտ կիներ չեն կրնար արտագրուիլ քիչ ունեւոր դասակարգին մէջ : Զանազան պարագաներ կը նպաստեն այս յաջողութեան . իսկ , ընդհանրապէս , մասնաւոր կը մնան այս պարագաները :

Կերպ կերպ խորհողներ չառ կան . հետեւաբար նոյնքան ալ չառ միջոցներ : Ոմանք կը կարծեն թէ մեր աղջիկները կամ կիները պիտի բարեւաւորին տնտեսագիտութեան ուսմամբ որ պիտի ընդհանրացնէ առտին կարգապահութիւնը , մաքրափրութիւնը , պարզութիւնը , տնայն ոգին եւ վերջապէս տնտեսագէտ կիները : Տնտեսական գիտութիւնը գիտութեանց ամէնէն անհաճոն նկատուած է եւ որպէս զի այս ամէն յատկութիւնները ուսմամբ ստացունին , տնտեսագիտութեա

խորին ուսումնասիրութեանը հասնիլ պէտք պիտի ըլլար :

Այս յատկութեանց գլխաւորները արդէն օտար չեն հայ աղջկանց . անիրաւութիւն է ուրանալ հայ կիներուն մաքրութեան , կարգապահութեան եւ մինչեւ աստիճան մը խնայասիրութեան համար ցուցուցած հոգածութիւնը : Եթէ գանգառի տեղի տուող բան մը կայ , այդ ալ յետին աստիճանի խղճահար ըլլալինն է , մանաւանդ տան մաքրութեան գործերու մէջ :

Ինչպէս որ կերեւար նախորդ յօդուածիս դասակարգութենէն , հազարաւոր աղջիկներ պիտի կարենային այսօր սպասուհիներու թուուել տան մաքրութեան ապերախտ գործերը եւ ժամանակինն նուիրել աւելի զարգացեալ , աւելի ազնիւ եւ գլխաւորաբար սրտի մշակութիւն եւ մտքի զարգարանք տուող զբաղումներու :

Մտքի մշակութիւն , տան մատակարարութիւն , իրարու արգելք չեն բնաւ : Մանաւանդ որ անհատ մը այնքան կատարեւագործուած կը նկատուի որքան մանրամասն աշխատութիւնները կը թողու եւ հսկողութեան ընդհանուր աշխատութիւնը կը ստանձնէ : Բայց հայ կինը՝ այս ըմբռնումը կատարելապէս չունի եւ եթէ երբեք կարենայ մանրամասն աշխատութիւններէն ազատիլ , աւելցած պարագայ ժամերը , իրեն համար , ծուլութեան հեշտ միջոցներ կըլլան՝ զորս չը գիտեր ինչպէ՞ս արգիւնաւորել իր մտքին եւ բնաւորութեան զօրացմանը եւ բարեւաւորութեանը համար :

Վերջապէս՝ հարցնել թէ ինչ պարտին սորվիլ հայ աղջիկները , բոլորովին ճիշդ չէ : Լաւագոյն կըլլար հարցնել . ինչպէ՞ս պարտին դաստիարակուիլ : Այն ուսումը զոր իրենց դպրոցական շրջանին մէջ կը ստանան ըստ բնականին , թէեւ ոչ այն չափով որ զիրենք մասնագիտութեանց կարողացնէ , քիչ առթիւ իրենց օգնութեան կու գայ կեանքի վանազան դիպուածներուն մէջ , որոնցմէ յաջող ելելու համար դաստիարակութեան գործակցութեանը անպատճառ կը կարօտին :

Դաստիարակութիւնը միայն քաղաքավարութիւն , միայն գիտութիւն չէ . միայն պատրաստամտութիւն ու սրտոտութիւն չէ . չէ եւ ոչ իսկ միայն գործունէութիւն , կարգապահ-

հութիւն կամ դատողութիւն : Դաստիարակութիւնը այս ամէն յատկութիւններուն ամբողջութեամբ մարմնացումն է մէկ անհատի վրայ որ կարող կ'ըլլայ , մտքին անկասկածամբ եւ սրտին կամքով , օգտակար ընել այս յատկութիւններէն իւրաքանչիւրը՝ յարմար ժամանակին եւ կեանքի սրտեալ պարագաներուն մէջ : Այս պարագաներուն գլխաւորները անոնք են որոնց մէջ մարդ կը ճգնի ճախորդութիւնները վանել եւ յաջողութիւններ ստանալ :

Կեանքը անցընելու է այս մեծ պողոտայէն , անհարթ՝ բայց ուղիղ , յոգնեցնող՝ բայց վարձատրող , միշտ ուսուցանող ու կրթող . երբեմն վհատեցուցիչ տկարներու համար : Այս ճամբէն պարտի անցնիլ , հաստատամտութեամբ , իւրաքանչիւր անհատ որ կը փափաքի հասնիլ բարեւաւորութեան եւ զարգացման : Կողմնակի ճամբաները , ճշմարիտ casse-couներ , բալմաթիւ են , աւելի՛ կարճ , աւելի՛ զուարճալի , բայց վտանգաւոր , ուր սահիլը զիրինն է եւ յաջողութիւնը հաղիւ գնահատելի , մանաւանդ աննշան :

Այս գաղափարը , հակառակ իր ճշմարտութեանը , անհաճոյ է անուշտ , սրովհետեւ սկզբունքի մը կերպարանք ունի եւ գոհացում չիտար անոնց որ անկեղծօրէն գործունէութիւն կը փնտռեն եւ ասպարէզին կամ միջոցին վրայ կը վարանին :

* * *

Ուստի , իբր թէ մինչեւ հիմայ բան մը խօսած չըլլայինք , վերադառնանք մեր սկզբնականէտին եւ հարցընենք . ինչ պէտք է՝ հայ աղջկանց դաստիարակութիւնը կատարեալ ընելու համար :

Այսպէսով գործնական խորհրդածութեան մը մէջ մտած կ'ըլլանք . որովհետեւ սկզբունք մը կը նմանի ճամբուն եզրը տնկուած գերանին որուն վրայ նկարուած ձեռք մը ուղղութիւնը կը ցուցնէ պարզապէս՝ առանց բացատրութեան կամ մանրամասնութեան :

Ուրեմն իրենց բնաւորութեանը տեսակէտով երկու կարգի կը բաժնենք այն անհատները որոնք կեանքի ընթացքին մէջ կը կարօտին մեկնութեանց կամ մանրամասնութեանց :

Կրաւորական եւ անհոգ ընաւորութիւնները գրգռիկ կը կարօտին եւ գործունէութեան : Հարկ է ասոնց սորվեցնել նախ մարմնոյ եւ առողջապահական մաքրութիւն ու խնամք, աւօրեայ , յարատեւ : Պէտք է ձեռքերնէն լռել եւ պրտը տցնել , մարմնական հրահանգի մէջ կրթել , առարկաներու դաս տալ ընտելեան բացօթեայ դասարանին մէջ , լեռները , դաշտերը , գիւղը , քաղաքը , գործատեղին , արուեստանոցը եւ մնացած ուրիշ այն ամեն տեղերը ուր՝ աչքի տեսութեամբ , միտքը կը զօրանայ եւ գործունէութեան անվարժ բնագոյնը կ'ոգեւորի :

Անգամ մը որ կ'արթննայ գործունէութեան եւանդը՝ առանց վարանելու արծարծել անհատին մէջ պատասխանատուութեան եւ իր գործերուն տէրն ըլլալու գաղափարը եւ զգացումը : Դատարարական շրջանին ամէնէն փափուկ ժամանակամիջոցն է այս , ուր անհաւը առաջնորդութեան կը կարօտի դեռ : Առանց այս վերջնական հսկողութեան ստացուած գործունէութիւնը յաճախ վնասուի իր ըլլայ , մանաւանդ երբ անհատը տղայութենէն ի վեր հրահանգներ միայն գործադրելու վարժուած է , եւ պատասխանատուութենէ չէ խայթուած :

Միթէ քիչ անգամ կը դիտուին ամենագեղեցիկ բարեմասնութիւններով օժտուած աղջիկներ , որոնք անժիր եւ անպատասխանատու կեանքի մը մէջ մեծնալով , անմիջապէս հաւասարակշռութիւնին կը կորսնցնեն այն օրը՝ երբ ամուսնութեամբ , գործով կամ արուեստով կը մտնեն նոր միջավայրի մը մէջ ուր իրենցմէ կ'ակնկալուի յարարերական գործունէութիւն մը որուն ընաւ պարտաւորուած չէին : Կրաւորական փայտներուն համար այսքան բաւական է :

Անցնինք ներգործական կամ կորովի տիպարներուն :

Ասոնց սլակածը , կամ լաւ եւս ասոնց չի գտածը , ասպարէզ է կամ գործունէութեան առարկայ :

Ամէն գօրութիւն , բնութեան մէջ , ուզաւ ման կը կարօտի : Մարմնական ջերմութիւնը , զնդերային գօրութիւնը , ջիղերու կազմածը , նոյնքան պէտք կը զգան ուզաւման՝ ջրառութեամբ , մարմնամարզով կամ շարժմամբ , հաճելի ընկերութեամբ , որքան միտքը կամ հոգին՝ երբ ունեցած կորովէն նուազ կը սպառէ :

Ժիր ընաւորութեամբ օժտուած աղջիկներուն կը մնայ լաւ խորհիլ եւ ընտրել իրենց անձին ո՛ր եւ է գործունէութեան ասպարէզ ուր արդեամբ սպասի իրենց բնածին կորովը , եւ որ ամէնէն աւելի յարմարը եւ հաճելին ըլլայ իրենց ճաշակին , մտքին , առողջական վիճակին եւ տրամադրութիւններուն :

Ո՞վ կը համարձակի պնդելու թէ հայ աղջիկը յարարերական գործունէութեան մը դիւրութիւններէն զուրկ է , երբ այդ գործունէութեան նպատակը բարի է եւ գովելի , համարձակ ու անկեղծ , համակրելի ու հաւանելի , մտքի կազդուրիչ եւ սրտի սփոփիչ : Արդէն ասոր հակառակ գաղափարը՝ անգործ եւ ծայր աղջկանց կամ կանանց տարածայնութիւնն է որոնք ամէն նախաձեռնութենէ կը խորշին , եւ անպատասխանատու անգործութիւնը կը նախընտրեն :

Այս մասնաւոր խորհրդածութիւններէն վերջը՝ որոնց շարքը անհուն է , կը մնայ քայլ մը դեռ առնել գործնականին մէջ գիտնալու համար թէ ո՞ր կարգի զբաղումները ամէնէն աւելի յարմարներն են արդի հայ աղջկանց կացութեանը :

Թողունք անմիջական կատարելագործութեան երազը . բաւ է եթէ յաջողինք կազդուրել անոնց միտքը , ճաշակը , դատողութիւնը եւ պատասխանատուութեան ոգին : Կարծուածէն աւելի ժամանակի եւ աւօրեայ յարատեւութեան , վիճարանութեան , քննադատութեան կը կարօտի այս սփրնական ձեռնարկութիւնը իսկ :

Դրագիտութիւն կամ երաժշտութիւն , ընթերցում կամ նկար , մարմնոյ մարզանք եւ առողջութեան խնամք , ինչքի մատակարարութիւն եւ առանին կարգապահութիւն , ընկերականութիւն , զուարթութիւն , հաճելի բնաւորութիւն , կեանքի ըմբռնում եւ պատասխանատուութիւն , ընկերային կեանք եւ ընկերային պարտականութիւն , յարատեւութիւն եւ հաւատք , գութ եւ ողորմութիւն , խղճի հանգստութիւն եւ կրօնք , ահա անսահման եւ կոյս ասպարէզ մը մեր փափուկ սեփին համար , բաց եւ պարտաւոր : Լաւագոյն կ'ընէին այս շնորհին մէջ նախ սպառելով իրենց գործունէութեան անեղծ կորովը , մասնագիտութեանց վկայականներու հետամուտ ըլլալէ առաջ :

“ՄԱՍԻՍ, Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ս. Պատրիարք Հայրը չարթուս սկիզբը տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին գործոց վսեմ նախարարին հետ :

Ներսիսեան Որբանոց : — Իզմիրի Ներսէսեան Որբասիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովը կը ծանուցանէ մեզ թէ ամսոյ 21ին պիտի կատարուի այդ Որբանոցին Դ. տարե շրջանի բացման հանգէսը , պաշարով մը : Այդ հաստատութեան սաներուն թիւն է յիսուն , որոնցմէ 15ը դերձակութիւն կը սորվին , 2ը հիւանդութիւն , 2ը Սիվրիսարեանի մանուսայի գործարանին կ'աշակերտին , 1ը Թ. Սպարթալեան է ֆիլ. վաճառատան մէջ կ'աշխատի եւ 3ը գրաշարութիւն կը սորվին (2ը Թագրիկեան եւ 1ը Մամուրեան տպարանները) : Քանի մը որբեր ալ մօտեցաւ կօշկակարութեան , թիթեղագործութեան ու գորգաշինութեան պիտի հետեւին : Մնացեալները կը յաճախեն Իզմիրի Մեսրոպեան վարժարանը ու մանկապարտէզը : Գործ. Ժողովը հրապարակաւ շնորհակտութիւն կը յայտնէ հասարակութեան որ ամբողջ երեք տարի իր համակիր աշակցութիւնը չի զլացաւ այդ հաստատութեան :

Տարակոյս չունինք որ այսուհետեւ ալ նոյն օժանդակութիւնը պիտի գտնէ Ներսէսեան Որբասիրաց Ընկերութիւնը որ իր կատարած մարդասիրական գործը ամուր կըռուանի մը վրայ կը դնէ՝ արհեստական կըրթութիւն մը տալով իր խնամքին յանձնուած ընտանեզուրկ տղոց , անոնց ապագան ալ ապահովելով :

Ընկերութեան Գործադիր Ժողովը պատուրած է նաեւ Մաւխի խմբագրութեան զըրկելու սաներուն հաւաքական լուսանկարը , — մեծերը իրենց գործասեղաններուն առջեւ ոտքի վրայ , իրենց վարպետներուն հետ մէկտեղ , ու պզտիկները՝ գետինը նստած , Գրեթէ ամէնքն ալ կայտառ գէմքով ու բարեկիրթ երեւոյթով տղաքներ են , որոնց գոհունակ գէմքը կ'արտայայտէ ինքնին թէ խնամատ հոգածութիւն մը կը վայելեն :

Տոք Թ. Թիւրքաթեան խան , բանասէր բժիշկը , Թէ հրանէն Բարիզ կ'ուղեւորի — ինչ-

պէս կը կարգանք Բիւզանդիոնի մէջ — հոն գտնուելու համար՝ Շահին Փրանսական ստանը հասնելուն : Իր կինն ու զաւկները միասին կը տանի , զորս Զուլեյքիա պիտի թողու առժամապէս : Յարգելի Տոքթորը վերջերս բախտ ունեցեր է Շահին դուստրը ծանր հիւանդութենէ մը բժշկելու , եւ այս առթիւ՝ Ն. Վեհափառութիւնը «Առիւծ-Արեգակ» պատումանշանին մեծ ժապաւէնը շնորհեր է Թիւրքաթեան խանին , աղամանդեայ ծանրագին մատանիի մը հետ :

Կիւսկիւնեայ դաստիարակութեան կարգը Ռ. Պէրպէրեան եւ Ա. Սուրէնեան է ֆէնտիններուն էր վերջին անգամ : Առաջինը հիւանդ բլլալով , միակ դաստիարակ մնաց Սուրէնեան է ֆ. որ ասորոքելի ասուլիսի (causerie) մը ձեւը տուաւ իր նիւթին — պատմութեան եւ աշխարհագրութեան ուսուցումներու եղանակը , — եւ հետաքրքրութեամբ ունկնդրուեցաւ Արուեստանոցի սրահը համախմբուած դաստիարակներէն ու դաստիարակահիներէն :

Կսակի մը լուրը , որուն առաջին անգամ արծադանդ տուաւ Սուրհանդակ , հաստատութիւն գտնելու վրայ է : Այրի տիկին Պօզոս Քէլէկեան , — որուն ամուսինը 10 000 ոսկիի մօտ հարստութիւն մը թողած էր իրեն՝ իր կենդանութեանը փափագ յայտնելով միանգամայն որ անկէ բաժին մը հանէ բարեգործութեան , — որոշած է 4,000 ոսկի յատկացնել Ազգ. Հիւանդանոցին , մասնաւոր յարկի մը շինութեան համար : Տիկին Պ. Քէլէկեան 500 ոսկի ալ յատկացուցած է Մաքրիգիւղի աղջկանց վարժարանին շինութեանը :

Օրինակ մը վերնագրին տակ խմբագրականով մը՝ Արամ Անտոնեան Արեւելքի մէջ վեր կ'առնէ սա պարագան թէ , մինչ շատ մը գաւառներու կարօտեալներ անընդհատ դիմում կընեն Պատրիարքարանի եւ երբեմն ալ օտար կրօնաւորներու , նպաստ խնդրելով , պզտիկ հմայնք մը — Քղիի Խուփ գիւղը — որ մօտաւորապէս 100 պանդուխտ ունի Պոլսոյ մէջ եւ նոյնչափ մըն ալ Ամերիկա , Եգիպտոս եւ այլուր , ուղղակի իր այդ հեռաբնակ զաւկներէն նպաստ խնդրած ու ստացած է :

Խուփոցի ազգայիններուն այս ինքնաճանաչութեան գեղեցիկ օրինակը կ'արժէր հրապարակել, գրգիռ մը տալու համար իրենց ծնին. դավայրէն հեռու գտնուող ու կարողութեան տէր ազգայիններուն՝ թեթեւցնել նպատակը Սնտուկին բերը :

Յնուադէմի միտարանութիւնը տապանաքար մը շինել տուած է Սիմէոն արքեպիսկ Սէֆէրեանի գերեզմանին վրայ : Կը հաւատեն թէ հանգուցեալը 3000 ոսկիէ աւելի գումար մը թողած էր Ս. Յակոբեանց վանքին :

Նոր հրահարակութիւններ. — Ստացանք, Բէօթահիւայի առաջն. տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Աղանունիի մէկ երկասիրութիւնը, Տղոց կրօնագիտութիւնը, 29րդ հասարակութիւն Դաթեան Գործակալութեան : Արժ. հեղինակը, որ իր հովուական շրջանակին մէջ օրինակելի պաշտօնավարութիւն մը ունի եւ համակրութիւն վայելող եկեղեցական մըն է, ծանօթ է նաեւ իր լրագրական հասարակութիւններովը. տարակոյս չունինք որ իր սոյն դասագիրքը պիտի գնահատուի ազգ. վարժարաններէն ու մատուց սերունդին կրօնական կրթութեանը պիտի նպաստէ մեծապէս :

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳՍԻՍՈՒՍՅՈՒՆ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ

Կրթասեր ազգային մը, Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ, մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Բաղէշի Որբանոցին :

Կ. Պոլսէն, Նշան էֆ. Օգանեան մէկ օրինակ Մասիս նուիրեց իր ծննդավայրին՝ Երասխի Գործարարի ազգ. վարժարանին :

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԲԵՐՅԵՐՈՒ

ԳԼԵԱՒՈՐ ՅՕՐՈՒՄԵՆԵՐԸ

ԱՐԵՒԵԼԻՔ (Տէր եւ Տնօրէն Զ. Երանափեան) թ. 4313-4318. — Թատրոնը Պարօկահայոց մէջ (Նամակ Թէհրանէ). Գ. Տաշկէնեան : — Սեղանաւորական Նօթեր Մանչլսթրէ. Ա. Գ. — Տարեկան տեսութիւն Սղերգի վրայ Խոսրով : — Թիֆլիզի Հրատարակչականը եւ Պարոնեանի երկասիրութիւնները (Խմբագրական) : — Պալքանեան Նօթեր. Զմեռ եւ Գարուն. Բ.

Զ. — Ատանայէն արձագանգ. Դ. — Խըտրըրլի. Դ. Օգանեան : — Հայ ուսուցիչները (Խմբագրական) Զ. Ե. — Լոյս Սողալթիի ճառին առթիւ. (Նոյն) : — Կրօնական սովորութիւն մը. Յ. Տ. Մ. — Թիֆլիսներու հիւանդութիւնները. Մ. Յ. Ճեղայիրեան : — «Հզօր հիւլէն» . Ռ. Որբերեան : — Կենսագրական նախադիժեր Դ. Սարգիսեանին վրայ. Ա. Յ. Աշխատեան : — Դեղարանին աղջիկը (նորավէպ) . Ենովի :

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ (Տէր եւ Տնօրէն Բ. Քեյեան) թ. 1083-1088 : — Հայ Վանօրայք. Տրդատեպիսկ. Պաղեան : — Զմեռանք Դ. Սարգիսեանին որբիկները. Տիրայր վրդ. — Երկու օր թաղ գիւղի մէջ. Նոյն : — Խաչի տօները. Նոյն : — Զէնկիլէրի նոր կիրակին. Մեհնէ : — Մայիս մէկի մտածումներ. Մ. Սուրբանեան : — Հնախօսական. Մաղաքա, Մաժաի, Կեսարիա. Ե. Երկաթեան : — Դեթսեմանի. Ս. Վ. Սաւուրեան : — Ս. Զատիկի ի Զէյթուն (Թղթակցութիւն) : — Հայ տաղանդ մը. Արսէն : — Կաթն աղբիւր եւ Մամն աղբիւր. Դեղարն : — Դէպ ի Բարիլ (Խմբագրական) Բիզանդի Քեյեան : — Փաթըմէ Նիկեար Հանըմ. Պ. Կարապետեան : — Պատմութեան. Ն. Ս. Ճեղայեան :

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Տէր եւ Տնօրէն Տ. Ճիլիշեկեան) թ. 359-364 : — Շիրքէթի Խայրիէ, այսինքն բարեգործական բնկերութիւն (Խըմբագրական) Լիոնիէ : — Զինուորական արշաւանքը. Նոյն : — Դաշնակցութիւն դաշնակցութեան դէմ. Նոյն : — Արուեստահանդէսին մէջ. Մ. Բօշ. Ժողովրդային դատարարակութիւն. Անադօղ Ֆրանս : — Ազգ. Հիւանդանոց եւ սիկատի թուղթը. Ժ. — Վիէնայի Միթիարեան Միտարանութեան անմիտարանութիւնը (Խմբագրական) : — Երգեցողութիւնը. Վ. Դ. Զ. — Աղջկանց դատարարակութիւնը. Տ. Շաշեան : — Դաւանի կեանքը. (Նամակ Զօրումէ) : — Պատիժը (Նորավէպ). Միհրան Ուղուրեան Որբանոցներու շարքը. Գ. Կ. Ո. :

ԱրՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵՈՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսընլար եօգուշու, Թիւ 27

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂԻՆ

97 Միլիոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻՒՂԻՆ

137 Միլիոն

Ընկերութեան գրամատուհին է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնոն եֆ. Քալսեղեան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան եֆ. Տէր Ներսէսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օսմ. Պանքայի գէմ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 25,000 ԲԱՌ, ՈՃ, ԵՒԱՅԼՆ

Այս բառարանին երկրորդ տպագրութենէն հազարաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուածը ամենէն զօրաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով հանդերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աւանդ կրնայ կոչուիլ :

Դիմ գօրաւոր քառքօնէ կազմի 25 դր.


Դիմ ընթիւ լաքակազմի 27 դր.

Կեդրոնացեալին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Վաճառատունը

Ֆինանսըրար եօզուշու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրադաճառաց քով :



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մեցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊՍՐՋՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեալին, Սերքէնի, Քէօրրիւլի խան, Թիւ 3

Մասնաւորապէս, Ղալաթիա, Պէօլիք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վճարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիզական եւ գաղղիական ախտերու : Բերա, Թագսիմ փողոց, թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը :



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34,775,642	Փրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333	»
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մաֆասան ճին տեղը

Ընդհ. Քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ՔԷՈՏՈՐ ՌԷԲԲԷՆ

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կարասի, ապրանք

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՖՐԱՆՔ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան գրամատուցն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

“ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎՈ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաժամերով, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութենէ ետքը, երբէք ապահովագրիները (քօլիս) չեն ջնջուիր, մենամարտն ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին, բնաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագրին (քոլիս) չի պահանջուիր, ապահովագրիներու վճարումը դադրելու պարագային՝ ապահովագրի կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չառնուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրուողը:

Արկածեալներու դիմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէյի, երկաթուղիի, շողենաւի, առագաստանաւի, միջամներու խայթուածքի եւ ապահովագրուողին արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56